**Արձանագրություն N 2-3**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/18 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 08.07.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լ. Մելիքյան |
| Անդամներ՝ | Կ. Բրուտյան |
| | Հ. Պապյան |
| | Էդ. Առուստամյան |
| | Ա. Աչոյան |
| Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Ն. Նիկոլյան |

## 1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

---

(Լ. Մելիքյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակցի՝ «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 06.07.2026թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրա կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

## 2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

---

(Լ. Մելիքյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակցի հայտը գնահատվել է հետևյալ կերպ՝

| Մասնակցի զբաղեցրած տեղ | Մասնակցի անվանում | Գնահատման արդյունքում ստացած միավոր |
|---|---|---|
| **Ընտրված մասնակից** | «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ | 100 |

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Լ. Մելիքյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0:

### 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Լ. Մելիքյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Լ. Մելիքյան

Անդամներ՝ ------------------------------ Կ. Բրուտյան

------------------------------ Հ. Պապյան

------------------------------ Էդ. Առուստամյան

------------------------------ Ա. Աչոյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղարի
պարտականությունները կատարող՝ ------------------------------ Ն. Նիկոլյան